ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/23

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«ԼԵՅԿՈԱԼԵՔՍ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Դ. Հոփվսեփյանի (լիազորագիր՝ տրված 08.01.2021թ.),

քննելով «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/55» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «ԼԵՅԿՈԱԼԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից 12.04.2021թ. ներկայացված և 13.04.2021թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/23 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1.<u>«ԼԵՅԿՈԱԼԵՔՍ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«ԼԵՅԿՈԱԼԵՔՍ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 12.04.2021թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից հայտարարվել է գնանշման հարցում ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/55 ծածկագրով բժշկական պարագաների (գնման առարկա) ձեռքբերման նպատակով:

Գնահատող հանձնաժողովի 29.03.2021թ.-ի թիվ 1 արձանագրությամբ հաստատվել են գնանշման հարցումի հայտարարության տեքստը և հրավերը:

Համաձայն վերոնշյալ հայտարարության՝ ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/55 ծածկագրով գնանշման հարցումն իրականացվում է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

Համաձայն նույն հայտարարության՝ «Սույն ընթացակարգին մասնակցության հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը 15:00-ը: Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրը՝ 05.04.21թ. ժամը 15:00-ին»:

Վերոնշյալ ժամկետները նույնությամբ արտացոլվել են նաև ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/55 ծածկագրով գնանշման հարցման հրավերի տեքստում:

Մասնավորապես, հիշյալ հրավերի 4.2 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել համակարգի միջոցով ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից հաշված «-7-»րդ օրվա ժամը 15:00-ն: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում համակարգի կողմից:

Նույն հրավերի 8.1 ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝ Հայտերի բացումը կկատարվի համակարգի միջոցով՝ սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից հաշված «-7-»րդ օրվա ժամը 15:00»-ին:

Մինչև հայտերի բացման օրը վերոնշյալ հայտարարության և հրավերի տեքստերում հայտերի ներկայացման և դրանց բացման ժամկետների մասով փոփոխություններ չեն կատարվել:

Ի հեճուկս Գնահատող հանձնաժողովի 29.03.2021թ.-ի թիվ 1 արձանագրությամբ հաստատված հայտարարության և հրավերի տեքստերում տեղ գտած հայտերի

ներկայացման և դրանց բացման ժամկետների՝ Պատվիրատուն էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգում ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/55 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասով ներառել է մասնակցության հայտերի և դրանց ստացման, ինչպես նաև հայտերի բացման այլ ժամկետներ, մասնավորապես՝ դրանց համար սահմանելով ժամկետ 05.04.2021թ., ժամը 11:00-ն: Ի հավաստումն նշված փաստի՝ սույն բողոքին կցում ենք էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգից կատարված արտատպումը (screenshot):

Բողոքաբերս, պատրաստելով հիշյալ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, հիմք ընդունելով Գնահատող հանձնաժողովի 29.03.2021թ.-ի թիվ 1 արձանագրությամբ հաստատված հայտարարության և հրավերի տեքստերում տեղ գտած հայտերի ներկայացման և դրանց բացման ժամկետները, պատրաստվում էր մինչև 05.04.2021թ., ժամը 15:00-ն ներկայացնել հիշյալ ընթացակարգին մասնակցության հայտ, սակայն, քանի որ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգում սահմանված է եղել հիշյալ հայտարարությունում և հրավերում տեղ գտած ժամից տարբերվող այլ ժամ, նույն համակարգն այլևս թույլ չի տվել Բողոքաբերիս, և չեմ բացառում, որ նաև այլ ցանկացողների ևս, ներկայացնել համապատասխան հայտ, մասնակցել վերոնշյալ ընթացակարգին, և ամենևին էլ բացառված չէ, որ Բողոքաբերս կճանաչվեր հաղթող: Ստեղծված իրավիճակը հանգեցրել է այն բանին, որ Բողոքաբերս զրկվել է իր կողմից արտադրված և/կամ ձեռք բերված ապրանքներն իրացնելու և ձեռնարկատիրական եկամուտներ ստանալու իրական հնարավորությունից, իսկ ստեղծված իրավիճակի հետագա պահպանումը հանգեցնելու է Բողոքաբերիս վնասի պատճառման՝ արտահայտված այն իրական հնարավոր եկամուտների տեսքով (բաց թողնված օգուտ), որը Բողոքաբերս կունենար հիշյալ ընթացակարգի հայտերի ընդունումը վերոնշյալ հայտարարությամբ սահմանված ժամկետներում իրականացվելու դեպքում:

Գնահատող հանձնաժողովի 05.04.2021թ.-ին, ժամը 11:00-ին գումարված նիստում հաստատվել է հայտեր ներկայացրած մասնակիցների ցանկը, քննարկվել են նաև անհրաժեշտ այլ հարցեր (ներկայացված հայտերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխանության մասին, մասնակիցների կողմից գնային առաջարկների մասին, գների նվազեցման շուրջ բանակցությունների մասին, հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին), որոնք ամրագրվել են ՎԲԿ-

ԳՀԱՊՁԲ-21/55 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.04.2021թ.-ի հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրությամբ, որի պատճենը կցվում է սույն բողոքին: Նկատենք, որ նշված արձանագրության մեջ, որպես նիստի բացման օր ու ժամ, նշվել է 05.04.2021թ.-ը, ժամը 11:00-ն, մինչդեռ, վերոնշյալ հայտարարության և հրավերի տեքստերում հայտերի բացման ժամկետը նշված էր 05.04.21թ. ժամը 15:00 –ին:

Վերոգրյալ փաստական հանգամանքների հաշվառմամբ ներկայացնում ենք սույն բողոքը՝ ներքոնշյալ պահանջի մասին՝ համաձայն ներքոնշյալ իրավական հիմքերի ու հիմնավորումների:

Բողոքի իրավական հիմքերն ու հիմնավորումները, պահանջը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ և 11-րդ կետերի համաձայն՝ Գնումների հայտարարությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝

9) հայտեր ներկայացնելու ձևը, տեղը և ժամկետը.

11) հայտերի բացման ձևը, վայրը, օրը և ժամը:

Նույն օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 14-րդ կետերի համաձայն՝ Հրավերը պետք է պարունակի՝

12) հայտերի ներկայացման պայմանները, ներառյալ՝ ձևը, տեղը, ժամկետը և հայտի լեզուն, հայտերի վավերականության ժամկետը.

14) հայտերի բացման ձևը, վայրը, օրը և ժամը:

Նույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության համաձայն՝ Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով:

Նույն օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին: Փակ մրցույթի դեպքում հայտերը հրավեր ստացած բոլոր մասնակիցների գրավոր համաձայնության դեպքում կարող են բացվել մինչև հրավերում նշված ժամկետը լրանալու օրը:

Վերոնշյալ իրավանորմերի պահանջներից հետևում է, որ գնումների հայտարարությունը և հրավերը պետք է պարունակեն հայտերի ներկայացման պայմանները՝ ձևը, վայրը, օրը և ժամկետը, ինչպես նաև հայտերի բացման օրը, վայրը և ժամը: Ընդ որում, մասնակցելու ցանկություն ունեցող անձը հայտը իրավունք ունի և

կարող է ներկայացնել հրավերով սահմանված կարգով, ինչը ներառում է նաև հրավերով սահմանված ժամկետում հայտ ներկայացնելու իրավունքը: Ներկայացված հայտերն էլ բացվում են բացառապես հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: Ընդ որում, Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

Սույն գործով ինչպես հայտարարությամբ, այնպես էլ հրավերով, որպես հայտերի ներկայացման ժամկետ, սահմանվել էր ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/55 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը 15:00-ն, կամ որ նույնն է՝ 05.04.2021թ.-ի ժամը 15:00-ն: Նշված հանգամանքներից հետևում է, որ հիշյալ ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող յուրաքանչյուր անձ կարող էր մինչև 05.04.2021թ.-ի ժամը 15:00-ն ներկայացնել մասնակցության հայտ, ինչն էլ իր հերթին ենթադրում է, որ պետք է առկա լիներ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով նման հայտ ներկայացնելու հնարավորություն, քանզի ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/55 ծածկագրով գնանշման հարցումն իրականացվում է նշված համակարգի միջոցով: Հայտերի բացումն էլ նշված ընթացակարգի շրջանակներում կարող էր և պետք է տեղի ունենար միայն 05.04.2021թ.-ի ժամը 15:00-ին: Այնինչ, սույն գործով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով հայտերի ներկայացման ժամկետը փաստացի լրացել է 05.04.2021թ.-ի ժամը 11:00-ին՝ հայտարարության և հրավերում նշված ժամկետից շուտ: Նույն կերպ, սույն գործով հայտերի բացումը տեղի է ունեցել հրավերում նշված ժամկետից շուտ: Նշված հանգամանքները թույլ չեն տվել ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/55 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցել ցանկացող Բողոքաբերիս 05.04.2021թ.-ի ժամը 11:00-ից մինչև 15:00-ն ընկած ժամանակահատվածում իրացնելու հիշյալ ընթացակարգին մասնակցելու իր իրավունքը՝ հանգեցնելով այն հետևանքներին, որոնք արդեն իսկ վերը նշել ենք:

Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի ընդունումն ու բացումը տեղի են ունեցել հայտարարության և հրավերում նշված ժամկետների խախտման, որոնք էլ իրենց հերթին հանգեցրել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ իրավանորմերի իմպերատիվ պահանջների և Բողոքաբերիս՝ հրավերով սահմանված կարգով (այդ թվում՝ ժամկետներում) հիշյալ ընթացակարգին մասնակցելու իրավունքի խախտման:

Վերոգրյալ ամբողջի հիման վրա, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ և 50-րդ հոդվածներով՝ խնդրում ենք պարտավորեցնել ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/55 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝

1. նույն հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստի 05.04.2021 թվականի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշումները դադարեցնելու վերաբերյալ,

2.նույն հանձնաժողովի՝ 29.03.2021թ.-ի նիստի թիվ 1 արձանագրությամբ կայացված որոշումներով հաստատված հայտարարության և հրավերի տեքստերում փոփոխություններ կատարելու և հայտերի ներկայացման ու դրանց բացման համար նոր ժամկետներ սահմանելու մասին»:

Ի լրումն բողոքի՝ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«12.04.2021թ.-ին բողոքը ներկայացնելուց հետո gnumner.am կայքէջից տեղեկացել ենք, որ «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/55» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.04.2021թ.-ի թիվ 3 արձանագրությամբ կայացրել է որոշումներ ներկայացված հայտերը հրավերի պահանջներին համապատասխանող համարելու և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն հրապարակելու վերաբերյալ, ինչով, ըստ էության, անցել է գնման ընթացակարգի վերջին փուլին: Նման պայմաններում բողոքաբերիս խախտված իրավունքների վերականգնման, այդ թվում՝ նոր հայտարարվելիք գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու միակ հնարավորությունը «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/55» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելն է:

Վերոգրյալ ամբողջի հիման վրա, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 46-րդ և 50-րդ հոդվածներով՝ փոփոխում ենք 12.04.2021 թվականին ներկայացված բողոքի պահանջը և խնդրում ենք պարտավորեցնել ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/55 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.04.2020թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. <u>«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից սույն բողոքի շրջանակներում դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.04.2020թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/23 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2021/23 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/55» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):
2. Ընթացակարգի մասին հայտարարությամբ սահմանվել է, որ սույն ընթացակարգին մասնակցության հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով, մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված՝ 7-րդ օրվա ժամը 15:00-ն:

   Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված՝ 7-րդ օրը՝ 05.04.21թ., ժամը 15:00-ին:

<u>4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ԼԵՅԿՈԱԼԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը՝ բողոքի

լրացմամբ և կից փաստաթղթերով, «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/55» ծածկագրով ընթացակարգի հրավերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ և 11-րդ կետերի համաձայն՝ գնումների հայտարարությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝

9) հայտեր ներկայացնելու ձևը, տեղը և ժամկետը.

11) հայտերի բացման ձևը, վայրը, օրը և ժամը:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 14-րդ կետերի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի՝

12) հայտերի ներկայացման պայմանները, ներառյալ՝ ձևը, տեղը, ժամկետը և հայտի լեզուն, հայտերի վավերականության ժամկետը.

14) հայտերի բացման ձևը, վայրը, օրը և ժամը:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով:

Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***<u>հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:</u>*** Փակ մրցույթի դեպքում հայտերը հրավեր ստացած բոլոր մասնակիցների գրավոր համաձայնության դեպքում կարող են բացվել մինչև հրավերում նշված ժամկետը լրանալու օրը:

<u>Համաձայն «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/55» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասին հայտարարության՝</u>

«ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/55» ծածկագրով գնանշման հարցումն իրականացվում է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

Սույն ընթացակարգին մասնակցության հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով, մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված՝ 7-րդ օրվա ժամը 15:00-ն: Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված՝ 7-րդ օրը՝ 05.04.21թ., ժամը 15:00-ին:

Ընթացակարգի հրավերի 4-րդ կետի 4.1-րդ ենթակետի համաձայն՝ սույն ընթացակարգին մասնակցելու համար ***մասնակիցը համակարգի միջոցով*** հանձնաժողովին ***ներկայացնում է հայտ:*** Հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Հայտը ներկայացվում է մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Նույն կետի 4.2-րդ ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել համակարգի միջոցով ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից հաշված՝ «-7-»րդ օրվա ***ժամը 15:00-ն:*** Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում համակարգի կողմից:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ մասնակիցը համակարգի միջոցով հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: Ընդ որում, հայտը ներկայացվում է մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի հրավերով որպես հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանվել էր Ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից հաշված՝ «-7-»րդ օրվա ***ժամը 15:00-ն,*** այն է՝ 05.04.2021թ.-ի ժամը 15:00-ն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիշյալ ընթացակարգի մասին հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվել են 29.03.2021թ.-ին: Այսինքն՝ Ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող յուրաքանչյուր անձ իրավունք ուներ մինչև 05.04.2021թ.-ի ժամը 15:00-ն ներկայացնելու մասնակցության հայտ: Մինչդեռ արձանագրում եմ, որ էլեկտրոնային գնումների Armeps

համակարգում հայտերի ներկայացման վերջնաժամկետ նշված է 05.04.2021թ***. ժամը 11:00-ն:***

Միաժամանակ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ հայտերը բացվել են 05.04.2021թ. ժամը 11:00-ին: Փաստացի հայտերը բացվել են Ընթացակարգի հրավերում նշված ժամից շուտ:

Ամփոփելով վերը նշված փաստերը՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջի խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է մասնակիցների՝ Ընթացակարգին մանակցելու իրավունքի սահմանափակմանը:

Հաշվի առնելով նաև գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման և գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքները, որոնք գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից են՝ գտնում եմ, որ Օրենքի խախտմամբ իրականացված գործողությունները, որոնց արդյունքում խախտվել է Ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող մասնակիցների, այդ թվում նաև «ԼԵՅԿՈԱԼԵՔՍ» ՍՊԸ-ի՝ Ընթացակարգին մասնակցության իրավունքը, չեն կարող լինել իրավաչափ:

Ընդ որում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Այսպիսով՝ համապատասխան ընթացակարգային կարգավորումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող

հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ***ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը***, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Հիմք ընդունելով Ընկերության կողմից բողոքով ներկայացված պահանջը և ղեկավարվելով Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի բ) ենթակետով՝ գտնում եմ, որ Ընթացակարգը պետք է հայտարարվի չկայացած:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԼԵՅԿՈԱԼԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից 12.04.2021թ. ներկայացված բողոքը բավարարել. պարտավորեցնել ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/55 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին Ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**